45. ՇԱՀՏՈՏԻԵ

Վախտի ժամանակով կէլնի մեյ թակավոր: Էս թակավորուն մեյ վազիր կէլնի՝ շատ կտրիճ. շատ խելացի. իշգյուզմր մարթմ ի:

Ժամանակմ կիցնի. վազիր կմեռնի: Թակավոր. որ էդա վազիրին շատ կուզեր. կպիրի ինոր խաթրի խամար ինոր ախպեր կանի վազիր:

Վազիրի ախպեր խետ էլնելուն վազիր, կբաշլայի զուլում: Հմենից առաճ ուր ախպոր տուն կթալնի. էլած-չէլած հարստություններ ձեռքներաց կառնի:

Մնահանեն կանի. թե թակավորն ի ամր արե, որ ծեր էլած-չէլած տանեմ: Վարհասլ էս վազիր էն կանդար ուր ախպոր կնկան մեկ տղին կնեղի. կթալնի. որ խեղճեր ճար կտրած. էլ իդարա չի մնա: Չվանմ կառնեն զմեն օր կէրթան մեշից փետ կպիրեն. կծախեն. կուտան խացի. մեկ խոսքով ինչ գյլխխ ցավցուցեմ. վազիրի կնիկ ինքյ պավցե. տղեն էլ նոր էլե յոթ-ութ տարեկան: Էն կանդմր կէրթմն փետ կպիրեն կծախեն. որ ոտքներ կմաշի. խալվներ կկտոտվի. ջեորով ուրենց իդմրեն կանեն:

Մեկ օր էլ էսա վմզիրի կնիկ խետ ուր լաճուն կէրթմն մեշեն. չեն կանա շոտ ուրենց շլյմկ պոնե տմնոնա. մնզյան կմնան: Էտա քյաղքյի կմյդեն էլ էն ի. որ սմհմթ տսվերկսից (ա՛լա Թուրքիա). քյաղքյից ոչ մարթ պիտի էլնի դյուս. ոչ մտնի ներս:

Վմզիրի կնիկ էդօր որ մնգյմնի մնացե. խետ ուր լաճուն կուգյմն քյաղքյից դյուս պատիմ տւակ կնստեն: Կիշեր կմնան դմ: Կես կիշերին տղեն կասի. - Մարե. կէրթմմ դյուս:

Մեր կասի. - Բալա՛մ. նստի խետ իմ կշտին. մ՚էրթա էնդեխ. չէլնի ջանավարմ քյե տեպնի:

Տղեն ականչ կանե մոր. կէլնի քիչմ կմռնմճմնն. կնստի: Մեկ էլ կտեսնա բիրդան մեկ կէօլոմ ճրաքյի պես վմռվուն ուլնիկներ կթափի վեր ուր գյլխուն. կբոռա. - Մարե՛. խասի՛:

Մեր շատ կվախենա. կասի. - Կրակ էր թմփավ վեր իմ տղին. ի՞նչ էր էսա:

Կէլնի կվազի. կտիսնա. որ թանկագյին ակնունքներ են. շուշոտ-շուշոտ կժողվեն:

Տղեն մոր մոտեն գյոխտիկ չորս-խինգյ խատ կթմլի ուր ջեոբ. կէրթմն. կնստեն մոտ ուրենց փետեր. չյում առատուն կլուսնա: Փետեր կտանեն կծախեն. կուտան խացի:

Տղեն կասի. - Մարե՛, էս ավուր խաց կաւ, էսօր չենքյ էրթա. ես նեղացիր եմ. էսօր կէրթամ կխաղամ, վաղ նոր կէրթամ փետի:

Էնօր կմնան տուն. տղեն կէլնի կէրթա չարշին: Էն ոլնիկներ որ մոր մոտեն գյողցիր էր. գյոխտիկ պլսխիր էր. մեկեն կխանի, կպոնի ծեռ. խաղալեն չարշին կուգյա: Ցաճուդիմ տղին կկանչի. կասի. - Էտա ոլնիկ չե՞ս ծախե. քյե մեկ ոսկի տամ. տու զիկ:

Տղեն կիտի. թե յաճուդին ուր վերեն կծծղա. կասի. - Ցաճուդի՛. խելքյդ գյլոխ ժողվի. ես քյո ասած չեմ:

Ցաճուդին կասի. - Էրկու ոսկի տամ:

Տղեն կասի. - Ցաճուդի՛. խո ես քյո ծաղր չեմ. խելքյդ թալիր իս. էսա կուտա՞ն էրկու ոսկի:

Տղեն կիտի, թե ոչինչ պան ի. տաս փարա չեորով կաժի:

Ցաճուդին կասի. - Տղա՛, քյե խինգյ ոսկի տամ:

Տղեն կզարմանա, ըսկուն կիտի, որ յաճուդին ուր կխապի. փարեն չի տա:

Կասի. - Ցաճուդի՛, դյու իմ վերեն կծծղա՞ս, ով չանի՝ խերն անիծած, դե տու՛ր փնարեն:

Ցաճուդին խինգյ ոսկի կուտա տղին, ոլնիկ կանի:

Տղեն կանի փնարեն, կուտա եղ, միս. խաց. պանիր կտանի տուն, կասի. - Մարե՛. էն ոլնիկներաց, որ կիշեր թափավ վեր իմ գյլխուն. ես մեյ խատ պախեր ի, տարա տվի յաճուդուն, խինգյ ոսկի առի, տվի պանն-մանի, պիրի:

Մեր կուրախնա: Տղեն էլմել կէրթա չարշին. մեկ ոլնիկ էլ կխանի յաճուդուն շանց կուտա:

Ցաճուդին կասի. - Էդ էլ պե. առնեմ:

Տղեն կասի. - Խա՛. էս էլ էն կնխն ի, որ զի խապե՞ս, էլ չեմ իտա:

Վարճալ. ինչ գյլոխ ցավցուցեմ: Ոլնիկներաց գյին կկտրեն չյում խարիր ոսկի: Խինգյ ոլնիկ կուտա. փնարեքյ կանի. կվնզի տուն:

Կասի. - Մարե՛, տես կոլոմ փնրն եմ պիրե:

Մեր որ կտիսնա, շատ կուրախնա. կէրթա մոտ յաճուդին. կասի. - Ցաճուդի՛, իմ տղին ինչի՞ ես խապե, ախր էն ոլնիկներ մեկ խնզնր ոսկի ի:

Խինգյ խատ էլ մեր կծախի, փնարեն կանի խնզնր ոսկի. կտանան տուն. կասեն. - Աստված մե իտուր, քյեֆ մեր քյեֆն ի:

Մեյ ծեռքյ խորոտ քյոշկ սարա կշինին, ուրենց խամար աղչի. ծառա. մշակ, խզմնքյնր կպոնեն, չանց նոնն դնա խորոտ կուտեն, կխմեն. քյեֆ կանեն:

Ավուր մեկ մերը տղեն մեյտեղ նստեր են, մեր ա՛խ կքյաշի. տղեն կասի. - Մարե՛, ի՞նչդ է պակաս, որ ախ քյնշիցիր:

Մեր կասի. - Բալա՛մ, քյո խեր նոնն թակավորու վնզիրն էր. թակավոր ինոր շատ կսիրեր, խերդ որ մեռավ խորոխպերդ ի մկա վնզիր: Խորոխպերդ խետ էլնէլուն վնզիր, մեր տուն-տեղ, էլնծ-չէլնծ. մալ-մլքյեր բիթուն զավթեց. մե ըսկնն խեղճ կրակ թողեց, ապա որ էն ոլնիկներ չէլներ. մենքյ ի՞նչխ պիտի անինքյ:

Տղեն կասի. - Մարե՛, ես էլիր եմ տսընխինգյ տարեկան, դյու արե էրկու հատ էլ ոլնիկներաց տուր տանեմ թակավորու նդեա. որ թակավոր կիտնա, թե ուր վազիրին զի պես լաճ կա:

Մերն կէլնի, էրկու խատ ոլնիկ կդնի մեչ ւարծթե թափխին. արփշմե ալնախ կքյնշի վերեն. կուտա տղին:

Տղեն կառնի դյուզ կէրթա սո թակավոր, կտանի. կդնի թակավորու ւառնճ. ինքյն կքյնշվի ետ. ծեռ սրտին. չեռքյ կգանի գյետին. թակավորու դիմաց կմնա:

Թաւկավոր արփշե ալնախ որ կվերուցի թափխի վերվեն. ուլնիկներ ճրաքյի պես որ կվանովին. կպսպղան. թակավոր կշիվարի, տղին կասի. - Բալա՛ս, էլի նստի վեր աթոռին:

Շատ իքյրամ-պատիվ կանի. կառնի ուր կշտի խետ. կբաշլայի խետ տղին քյաւոցր-քյաղցր ասել-ծծղալ:

Տղի խորոխպեր. որ վազիր ի. էնտեղ նատուկ. կմտածի, կասի. - Վալա՛. թակավոր էսա կանդնար, որ տղին սիրեց վազիրութեն զիգնից կառնի. կուտա ինոր, ի՞նչխ անեմ. որ ազատվեմ:

Վազիր կասի. - Թակավոր ապրած կենաս. էդա ուլնիկնեկաց վերեն ինչի՞ ըդսկնա զարմացար. էդա տղեն քյո վազիրի տղեն ի: Քյո վազիր քյո խաւզինից իդա ուլնիկներ գյողցեր էր, տարիր էր, ուր տղեն չկիտցավ մկա պիրեց քյե նվեր:

Թակավոր կասի. - Վազի՛ր, դյու սութ կասես. իմ խազինեն էսա տեսակ պան չկա. ա՛ռ պալնսներ, կնա մեր խատ իսոնց նմշեն. ըսկնա վառվոուն պանմ պե. որ ավատամ:

Վազիր կառնի պալնսներ կէրթա խազինեն, ինչ տեսակ խորոտ պան որ կպիրի, կդնի էդ ուլնկներաց դիմաց, ըսկուն ինչ փախր ոսկու կուշտ:

Վազիր կմնա ամոթով:

Թակավոր տղին շատ կսիրի, կասի. - Բալա՛մ, ալա պատիկ ես, մկավան իմ նվեր մենակ էս ի, որ դյու էսօր գյանս իմ տուն կոնախլղի:

Տղեն կէրթա. ութ օրից սորա, կզանրդրվի, կէրթա թակավորու կոնախլղի:

Թակավորու էօդեն ճախեր կվանովեն, շամդնքյթեր կփսփստան. չալկիքյ կզանեն. վազիր, սանդրանզանմ, օնիքիլար շարան-շարան նստուկ ուրենց տեղ: Տղեն որ կմտնի ներս, թակավոր կուրախնա, իսոր խորոտկութնին. ջահելութնին մահիլ կէլնի. կկանչի, կտանի ան վիրին գյլեխ կնստցուցի. կբաշլայեն ուրենց խամար քյեֆ անել:

Ինոնքյ թո մնան ուրենց քյեֆին. մենքյ կանքյ դեխ բաղվանչին:

Թակավորու քեռշկ սարի ան՝ անանճ խաս բանչեն ի, որ աստվածութեն ինչ որ ըստեղծե՝ մեչ էդա խաս բանչին կկնդվի, բաղվանչին մեչ խաս բանչին կիշեր-ցերեկ թակավորու ծաղկներ կճրի, ծառեր կշախի: Էն տեսակ խորոտ ի արե. որ տեսնող մահիլ կմնա:

Ավուր մեկ էդա քյուղքյի մեչ պառավմ կա, մեյ խատ տաս տարեկան թանքյ տղեմ ունի: Էսա տղեն օրմ թակավորու խաս բանչի ան՝ անանվեն ընցնելու գյանխ, աչք կինի թակավորու խաս բանչի եմշներ, թասա կանի. կէրթա տուն, կխիվնդնա:

Խեղճ պառավ ինչ կանդուր լոխման հաքյիմ, բժիշկ դոխտոր կպիրի վեր ուր տղին, ճար չէլնե: Էն մեկօր էլ կէրթա թուխթ իրիշկացողի մուտ, կասի. - Բանքի չարոց էլնի:

Թուխթ իրիշկացող գյիրքյ կպանա, գյարի կթանլի, կասի պառվուն. - Քյո տղեն թասա արե. նաֆս թալեր ի, չյում չէրթա թակավորու խաս բանչից եմիշ չպիրես, ուտի՝ չի ժրի:

Պառավ կէլնի կէրթա մո բաղվանչին. էն կանդանր աղաչանքյ կանի, պաղատանքյ կանի. կասի. - Էդա գյետնի թափածներ ալա չէ մը. յան ծիրանմ, խնձորմ, յան դանմոն. տուր տանեմ տղես խիվանդ ի՝ կմեռնի. ուտի բալքյի ժրի:

Բաղվանչու սիրտ քյար կդմոնա, իսկի զմ չի տա. կասի. - Չյում չէրթմս թակավորուց նշանապան չպիրես, զմ չեմ իտա:

Մեկ խոսքով սահաթմ էրկու խեղճ պառավ աղաչանքյ կինի. ճար չէլնե. մեկ էլ բիրդան, խմբար կպիրեն պառվուն. թե շոտ արե տղեղ մեռավ:

Պառավ ուր սրտի կսկծից կբաշլայի անիծել, կասի. - Էյ բաղվանչի. աստծուց կխնդրեմ. որ քյո խաս բաղչեն էն տեսակ չորնա. որ պյուսն ուր տեղ չմնա: Կազլներ չորնան. եմշներդ փճանան, ըսկում էլնի, որ էլ ճար չէլնի, չյում Ծմհտոտիեն չպիրեքյ մեչ խաս բաղչին խաղ ասի՝ էլ չկանաչի:

Պառավ կէրթմ տեխ ուր տղեն, բաղվանչին մեկ էր բիրդմն կտիսնա. որ ի՞նչ. խաս բաղչեն ըսկուն չորցե. որ էլե կոեճ դաշտմ, կվմխենա. կթոնի կփախի կէրթմ. կմտնի յահուդու տուն:

Թակավոր. որ դմվմթ արեր ի, կճամխի ծառաներին կասի. - Կնացեքյ խաս բմղչից քիչմ խորոտ եմիշ պիրեքյ. սեղան զմրդրեքյ: Կէրթմն կտիսնան, որ ի՞նչ. ի՞նչ խաս բմղչու. ի՞նչ բաղվանչի, զմ չկա: Դմրտակ ետ կդառնան. կէրթմն թակավորուն կասեն. թե. - Քյո խաս բմղչեն չորցեր ի, ալուչա բիլմ չկա, բաղվանչին էլ փախեր ի:

Թակավոր շատ կպմրկանա. կէլնեն բիթյուն մեյտեղ կուգյմն խաս բմղչեն կտիսնան. որ ի՞նչ. կոեճ դաշտ ի:

Թակավոր մմր կանի, դմլմլներ դյուս կինեն, կբոուսն կասեն. - Թակավորու բաղվանչին վիր տուն որ ի, թող դյուս խանի. թե չէ որ տեղ որ կնդնենքյ, էնտեղ կվառենքյ, տանտեր կկախենքյ: Ցահուդին մխու խմբմր կուտա դալմլներուց, կուգյմն բաղվանչուն կպոնեն. կտանեն մո թակավոր:

Բաղվանչին թակավորուն կասի. - Թակավոր ապրած կենա, զիկ մեղ չկա. որ ղյու պատվիրիր իր առանց քյո մմրին, քյո խաս բմղչի մեչ մարթ չմտնի, մարթ պմն չտանի, էսօր մեկ պառավ կնիկմ էկավ: Կասեր՝ տղես խիվանդ ի, քիչմ եմիշ տուր տանեմ ուտի. որ ժրի: Ես էլ քյո մխուն ինչ կմնդմր, որ աղաչանքյ. որ ինգյմվ, պմնմ չտվի, մեկ էլ բիրդմն խմբմր պիրին՝ տղեդ մեռավ: Պառավ էլ ուր սրտի կսկսծուն անիծեց, ասաց. «Տեսնամ, որ քյո խաս բմղչեն տեղնստեղ չորնա, չյում Ծահտոտիեն չիգյմ. վերեն չի կարդա, էլ չկանաչի»: Ես էլ տեսա, որ խաս բմղչեն չորցավ, թողի փախա:

Թակավոր կասի. - Տո՛ ջանմ, Ծահտոտիեն ի՞նչ ի. ես թակավորմ եմ, չեմ կիտե, չեմ էլ լսե, ի՞նչ ճար անենքյ:

Վմզիրն էնտեխեն քյեֆն կուգյմ՝ կասի. «Վալլա՜հ, աղեկ էլմվ, վազիրութեն էլմ մնաց զիկ: Տղեն կճամխեմ կէրթմ կուրիսի»:

Վմզիր կասի. - Թակավոր ապրած կենաս, ինչի՞ ես շիվարե, Ծահտոտիեն մեր պմն չի, էդա տղի պմն ի. ուլնիկներ ո՛ր տեղեն որ պիրե, Ծահտոտիեն էլ կանա պիրե:

Թակավոր որ ուր խմս բմղչեն ուր էլած զմեն հարստութենից ավելի շատ կսիրեր. վմզիրի խաբրի վերեն տղի յախեն կպոնի, կասի. - Ա՛յ տղա, քյառուսն օր քյե օր կուտամ, կէրթս Ծահտոտիեն պիրես, որ՝ չպիրես. օր թմմա՝ մերդ էլ կսպանեմ, էլմծ-չէլմծդ էլ կթալնեմ: Դե՛, հայդե շոտ էլի կնմ:

Խեղճ տղեն արցունքյ աչքեր, լալելեն կէլնի կէրթմ տուն: Մեր որ կտիսնա տղեն կուլա, կասի. - Բալա՛մ. ի՞նչ էլեր ի:

Տղեն կասի. - Մարե՛, թակավորն ասաց՝ քառասուն օր քյե օր կուտամ. պիտի էրթաս, Շահտոտիեն պիրես, որ իմ խաս բանչի մեչ կարդա. որ էլմ կանաչի. չեմ կիտե Շահտոտիեն ի՞նչ ի, յա ղեր էրթամ, ո՞րտեղեն կանամ պիրե:

Մեր կասի. - Խերդ ծիմ ուներ, որ լեզու կեր էն ծիյուն, խորդ խետ խաբար կուտեր, թուրմ ուներ, որ կեծակի էր. իդոնքյ մկա խորոխպորդ մոտն ի: Կնա. թուկավորուն ասա. թե քյո խոր ծին. ինանն թուր տա, աստված օդորմած ի, կէրթանս. կպիրես:

Տղեն դարցավ, կնաց ան թակավոր, ասաց. - Թակավոր ապրած կենաս. իմ խոր ծին. իմ խոր թուր քյո վանզիր կրսվեր ի, ոչա կանեմ՝ առնես տաս. որ էրթամ, պիրեմ:

Թակավոր ամր կանի վանզիրին՝ շուտմ կէլնեն. ծին կպիրեն, թուր կպիրեն, կուտան տղին: Տղեն խոր թուր կկապի վերեն, ջեորով կքյելի, ծին կպիրի թաթարի թիմարմ կանի, ամար կդնի, կէլնի կխեծնի, գյալանա սաբր, գիդանա սալամաթ՝. յահու՛-յալլա՛, կինի ճամբախ:

Քյաղքյեն կէլնի տյուս, ծին կասի. - Տղա՛, դյու դո՞ր պիտի էրթաս:

Տղեն կասի. - Շահտոտիեն կինտրեմ, քյանի շանս սաղ ի, երկրե-երկիր պիտի կան գյանմ, չյում կնդնեմ: Թակավորուց քյառասուն օր օր եմ առե, քյանի երկիր կա՝ պիտի կան գյանմ, Շահտոտիեն կնդնեմ, որ մերս ազատեմ:

Կասի. - Իրեսդ սիվդակ մնա. բալա՛մ, մնաց իմ մարիֆաթին, աչքերդ խփի. ջուխտմ զանգին զարկ, տիսնանք ասպած ի՞նչ կուտա:

Տղեն աչքեր կխփի, ջուխտմ զանգին կզանի ծիյուն. ծին կվերցվի. մեկ էլ կտիսնա. սարիմ գլխիս ծին կայնավ, ասաց. - Տղա՛, դե էճի տակ, ես քիչմ արածամ, դյուն էլ խաց կե, ոհանթի. էլնենքյ էրթանքյ:

Ծին կարածաս. տղեն խաց կուտի. կարծնի, կէլնի էլմ էլ ծին կքյանշի, սարից կէճնի էմեկել իրես, ծին կխեծնի, քիչմ կէրթա. իրիկուն կմթնի. կխասնի քյաղաքյ: Տղեն կքյշի մեչ էդա քյաղքյին, ծին կէրթա պառվում դուսն վերեն կկայնի: Կէճնի տակ, դյուտ կթփի, պառավ կուգյա. դյուտ կպանա. կասի. - Պառա՛վ. մեյհվան կանբյուլ կանե՞ս:

Պառավ կասի. - Մեյհվան աստծուն մեյհվան ի, քյե տեղ անեմ, ապա քյո ծին որտե՞ղ կապեմ:

Տղեն կխանի ճանգյմ ոսկի կուտա պառվուն:

Պառավ, որ ոսկիքյ կտիսնա, պուտուկ կուտա վեր ճլորին, ճլոր կուտա վեր չախրկին, դոնեն բիթյուն կթալի դյուս, ցիցմ կզանի մեյ պուճախ, ծին կկապի, էմեկել պուճախն էլ քիչմ ճաթ կկոլոնի, կասի. - Դե՛, մեռնեմ քյե, դյուն էլ նստի էսա տեղ:

Տղեն կխանի քիչմ էլ փարա կուտա պառվուն կճամխի. քիչմ արթ, գյաուրի պիրել կուտա ծիյու խամսար, քիչմ էլ կեր-կերակուր ուրենց խամար:

Ծին կկերակրեն, ուրենքյ էլ կուտեն-կխմեն. կպառկեն կքյնեն, չյում առտուն:

Տղեն կէլնի կասի. - Մեյ խատ էրթամ մեչ էսա քյաղքյին, տիսնամ ի՞նչ կա. խենքյ սալամ չեմ կանա առնե:

Կէլնի կէրթա մեչ քյաղքյին, կտիսնա, որ էն մեկ փողնի մեչ, մեկ տուն սև քյաշիր են վեր դուսն, կուլան, կմոմսան. ինոր դրկցի տուն չալկիքյ կզանեն. կխաղան:

---

* Եկողին համբերություն, գնացողին՝ ողջություն (թուրք.):

Տղեն կզարմանա կասի. - Էս ի՞նչ առսզ քյաղաքյ ի. մեյ դրկցի տուն մարթ ի մեռե, կուլան, կմոմռան, էն մեկէլ դրկցի ումուր չի. չալկին կզանի, խարսնիս կանի: Իսոնքյան մեմեկու խաթր անել չե՞ն կիտե:

Կտաւնա կուգյա ուր տեսածներ պառվուն կասի:

Պառավ կասի. - Բալա՛մ. քյե դանվի չկա. ի՞նչ անես, ըսկուն պաներ:

Տղեն կասի. - Ի՞նչխ ինչ անեմ. պիտի չխասկանա՞մ, ինչի՞ ըսկնա կանեն:

Պառավ կասի. - Մեր թակավորու ախչիկմ կա, չեքյ կիտե սեյրի եի, թե չէ փանրի. սիրու տեր ունի: Ջմեն օր մեկ ջհել կէրթա թակավորու ախչկա վերեն կփսայվի, իրիկուն կպառկեն, առատուն փեսա չկա: Չենքյ կիտե՝ ախչի՞կն ի կուտի ուր իրկան. թե ի՞նչխ կէլնի:

Տղեն կասի. - Վալլա՛հ. առատուն էլ ես պիտի էրթամ էն ախչիկն ուզեմ:

Պառավ կասի. - Օղու՛լ. բալա՛մ. ի՞նչ դավիդ ի, ճամխորթ մարթ ես, ըսկուն պաներ ի՞նչ անես. վոդիեմ գյա վերեդ:

Էն մեկէլ օր տղեն պառվուն ականջ չանե, կէլնի կէրթա կտիսնա. որ ի՞նչ՝ էն տուն որ խարսնիս կանին, էսօրն էլ իսոնքյն են սև քյանշե, կուլան:

Տղեն կէլնի, դյուզ կէրթա՝ մո թակավոր, կնստի փեսա աթոռի վերեն:

Թակավոր որ կտիսնա տղի խորոտկութեն, ջհելութեն, կալամքյաշ ընքվեր. թուխ-թուխ աչքեր, քյառսուն սրտով կսիրվի վեր տղին, կասի. - Ա՛խ, տղա, ուրիշ ինչ որ կուզես, ասա տամ, իմ ախչիկ մա՛ոնե, վազն արե իդա սանվդից:

Տղեն կասի. - Թակավոր ապրած կենաս, ես իկեր եմ, որ քյո ախչիկն առնեմ, կարիբ մարթ եմ. ուրիշ պանն զի պետք չի:

Թակավոր որ կտիսնա ճար չէլնե, ամր կանի, մեկ քյոշկ սարիմ մեչ պատրաստութեն կտիսնան, տղի խարսնիս կանի. ուր ախչիկ կփսակի վեր տղին:

Առճի կիշեր. որ խարս փեսեն կէրթանն մեյտեղ, տղեն կպիրի թակավորու ախչկան կպառկցուցի. ինքյ թուր կչլդի, կպախկվի դռան իտև. տիսնա որ՝ ի՞նչ, կես կիշերին Սև դև կուգյա՝ կէրթա՝ մոտ ախչիկ, ծեռ կթալի ախչկան մեչք կպոնի, կուտա ուր քյթին, կխոտոտա. ախչկան ռանգյ կկտրի մոտեն. Էլմ կդնի գյետին, դեորմ կմնա մեկ էլ:

Տղեն որ կտիսնա դևն ախչկան ինչխ կանի. մեկ էլ բիրդանն թուրը ծեռ կբռռա. - Հէ՛ գիդի անխոգյի, անտեր ախչի՞կ ես կնդե. հազր կաց, էկա:

Դև կանի որ էլնի վեր. տղեն կխասնի, դևու բոչամ կպոնի, կքյանշի գյետին. աղեկմ կպրտի. կփանթյութի մեչ ջլին, կտանի կթանլի դյուս:

Դև որ սպանեց պոծավ, էկավ առեց թակավորու ախչիկ, ոհաթ պառկավ, չում առատուն:

Թակավոր. որ տղին էն կանդանր կսիրեր, իրիկվնե թամխիր էր. վով որ առատու ականջկլա պիրի, թե՝ տղեն սաղ ի, ինոր աղեկ ադիեքյ կուտամ:

Թակավորու կառավաշներ կիշեր քյներ չէր տարե, չյում առատուն: Ճոչ կառավաշ կվանզի կուգյա դյուռ կպանա, կիրիշկա, որ մեկ մարթ ի պառկուկ ախչկան տեղաց մեչ: Կասի. - Վա՛խ, էն խորոտ ջհելն էլ կուտիսավ:

Պստիկ կառավաշ կուգյա դյուռն կպանա, կտիսնա. որ մեկ մարթ ի. աման լխեֆ պանցր ի. ուտնուր կասի՝ թակավորու ախչիկն մեկ պրտուճ էր, ըստեղ պանմ կա. որ լխեֆ ըսկնա պանցր ի: Ուշիկմ կուգյա՝ լխեֆի ճոթ կվերուցի, կտիսնա. որ ի՞նչ՝ տղեն պառկե, ախչիկն առե ուր ընթանն տակ: Վազելեն կէրթա՝ թակավորուն ականջկլա՝ կուտա:

Թակավոր ինոր կխանլաթի, նոր թազանդանն կպիրի խարսնիս կանի:

Տղեն ինանն թակավորու ախչիկ յոթն օր մեյտեղ կմնան:

Մ'եկ առատուն, տղեն ակխե մեչ ուր տեղաց, բիրուսն Ծահտոտիեն կինի միտ. կասի. - Ա՛խ. ա՛խ. տասն օր ընցավ. մնաց եռսուն օր. ես էսա ճալո՞վ պիտի էրթամ Ծահտոտիեն պիրեմ. մերս ազատեմ:

Ուր կնգյան կասի. - Ես էսօր կէրթամ. քյուսուն օր զիկ աչքի. թե էկա՝ դյու իմն ես. թե չէկա՝ դյու քյո գյլխու ճար արա:

Ախչիկ որ կլսի, լալելեն կէրթա խոր մոտ: Թակավոր կկանչի տղին. ինչխ կանի, տղեն ուր սանվոից վազ չի գյան: Կէլնի կխեծնի ուր ծին. կինի ճամբանխ:

Ծին կասի. - Ա՛յ տղա, աղեկ էր գյեռ թակավորու ախչկան խետ փսայվար. էլ թողիցիր դանր կէրթանս. տասն օր ընցավ. մնաց եռսուն օր. թող մնիր էսա տեղ, ճամխիր մերդ էլ պիրիր. մեյտեղ ապրեքյ. Ծահտոտիեն որտե՞ղ պիտի կնդնես:

Տղեն կասի. - Ախր չէ որ խոսք եմ տվե. խոսքիս տեր պիտի մնամ: Գյանի դյունեին ծեր կա՝ պիտի կան գյանմ:

Ծին կասի. - Իրեսդ սիվդակ, աչքերդ խփի, զանգյուն զանրկ:

Տղեն աչքեր կխփի, զանգյուն կզանի. ծին կթռնի. մեկ էլ կտիսնա՝ սարիմ գյլոխ կայներ ի: Ծիյուց կէճնի տակ. ծին կարածա, ինքյ խաց կուտի. կոհնթի. կէլնի ծին կքյանշի յավաշ-յավաշ սարից կէճնի է մեկէլ իրես:

Կխեզնի ուր ծին. քիչըմ կէրթա. կխասնի մեյ քյաղքյիմ: Կէրթա պառվում դռան վերեն կկայնի:

Դյուռ կթփի. պառավ կուգյա դյուռ կպանաս. կասի. - Պուրև քյե. պառավ. մսաֆր կանքյուլ կանես:

Պառավ կասի. - Մսաֆր աստծու մսաֆրն ի. ապա քյո ծին որտեղ կապեմ:

Տղեն կխանի ճանգյ ոսկին կուտա պառվուն:

Պառավ. որ ոսկիքյ կտիսնա. տոճիկմ կանի. պուտուկ կուտա վեր ճլորին. ճլոր կուտա վեր չախրկին. դռնից կթալի դյուս. ցիցմ կզանի մեյ պուճախ. ծին կկապի. տղին էլ կասի. - Մեռնեմ քյե. արե՛ դյուն էլ նստի ըստեղ:

Տղեն կասի. - Պառա՛վ. առ քյե ճանկյմ ոսկի. կնա չարշիից թե՛ ծիյուն. թե՛ մէ խամար քիչմ պանն-մսան պե. մեյտեղ ուտենքյ:

Պառավ կէրթա քիչմ ամրթ. գլարի. խոտ կառնի. քիչմ միս. չայ. շաքյար կառնի. խետ խաց-մացին կուգյա տուն:

Ծիյուն եմ կուտան. ուրենքյն էլ խաց-մաց կուտեն: Պառավ կէլնի խաստ դեռշակմ կպիրի կթալի դռան իտև. կասի. - Խորածներ մեզնից վազ չեն իգյանմ. վախենամ գյանն ծին տանեն. իրիկուն տեսան որ դյու էկար:

Տղեն կասի. - Պառավ ի՞նչ ծի տանել. վո՞վ ի տեսե. վո՞վ կտանի:

Պառավ կասի. - Մեր դրկցին յոթ տղա կա. յոթն էլ գյող են. մեչ քյաղքյին էլ պանն չեն թողնե. որ չեն գյողնաս: Թակավոր էն կանդանր կփնտռի գյողեր. չի կանա կնդնե:

Տղեն որ կլսի. յավաշմ կէլնի վեր. կէրթա էդա դրկցի տուն. գյող տղեյներաց մոտ: Կասի. - Ես լսիր եմ. որ դյուքյ գյող եքյ. ամա ծե մանրիֆանթներն ի՞նչ են:

Մեկն կասի. - Իմ մանրիֆանթ էն ի. որ կիշեր ինչ տեսակ մարթ որ տիսնամ. առանց տուն ինչ տեսակ խալվներ որ փոխի. ես կճանչնամ:

Էմեկէլ կասի. - Ես աղեկ պատ կէլնեմ:

Խինգյն էլ կասեն. - Ինչ կանդար ծանոր պեռ էլնի. կանանքյ շլկե մեյ դեռեն վազե:

Տղեն կուսի. - Իմ մարիֆաթն էլ էն ի. որ ինչ տեսակ փանկուկ դյուռ էլնի. ես կպանամ, մարթու եէլ. որ տանեն կախեն. խետ ծեռ տամ իմ բեղեր. էլ չեն կախե. կազատվի:

Գյոդեր կասեն. - Վալլա՛հ, իսորից ուղեյ պան չկա, մենքյ էլենքյ ասխպեր. ի՞նչ որ պիրենքյ՝ մեյտեղ կիսենքյ:

Կէլնեն մեյ տեղ կէրթան տեխ թակավորու խազինեն: Տղեն խե խասնելուն ծեռ կուտա դյուռ կպանամ, կմտնեն ներս, ութն էլ ուրենց շլանկն աղեկմ կպոնեն. կառնեն կէրթան:

Տաշտիմ մեչ մաղարեմ կա շինուկ, էնտեղ կպախեն:

Առատուն թակավոր կտիսնա՝ ուր խազինի մեչ գյոդի մտե, էլամ կանի. կասի. - Վով որ իմ խուզինի գյոդերաց տեղն ասի, իմ ախչիկ կուտամ ինոր:

Տղեն կէլնի, գյախտիկ կէրթա մո թակավոր, կասի. - Թակավոր ապրած կենաս, ես կիտեմ քյո մալեր դա՞ր են, աման էն կանվլով. որ ես ծեռ կուտամ իմ բեղեր՝ գյոդերաց էլ պան չասես:

Թակավոր կանբյուլ կանի, տղեն կտանի էն մաղարեն շանց կուտա, կտիսնան. որ քսան տարի ուռանճ ինչ կուրիսեր ի մեչ քյաղքյին, բիթուն էնտեղն ի:

Տղեն կպիրի գյոդերն էլ շանց կուտա, կպոնեն կտանեն մո թակավոր, գյոդցված պաներ կուտան տիրուանքյտերաց, գյոդերաց կպիրեն. մեյ-մեկ կկախեն կմնա մեկն. որ ասիր էր՝ ես կիշերվան տեսած մարթս որ մեկէլ տիսնամ. կճանչնամ. տղին կճանչնա. կասի. - Տնավե՛ր, ծեռ տուր բեղերդ Է՞:

Տղի դիժար կուգյան, ծեռ կուտա բեղեր, էն գյոդ կանզատվի:

Թակավոր կպիրի իրեքյ օր, իրեքյ կիշեր խարսնիս կանի. ուր ախչիկ կուտա տղին:

Կընցնի մեյ քյանիմ օր. մեկ էլ տղեն բիրդանն կինի միտ, կասի՝ ա՜խ. ես իկիր եմ, Ծահտոտիեն պիտի տանեմ. մերս ազատեմ, համա ըստեղրանքյ խետ իմ քյեֆին կան կուգյամ: Կնգյան կասի. - Ես առատուն կէլնեմ կէրթամ, չյում քյառսուն օր. թե էկա՝ դյու իմն ես. թե չէկա՝ գյլխուդ ճարն արա: Ախչիկն լալեն կէրթա մո թակավոր: Թակավոր կկանչի տղին, ինչ կանդանր, որ կհամոզի, ճար չէլնե խետ:

Տղեն կխեծնի ուր ծին, կթողնի կէրթա. քյաղքյեն որ կէլնի դյուս, ծին կասի. - Է՜յ, տղա՛, դյու ի՞նչ կանես, Էմեկէլ տեղ փսայվար չմնացիր, ըստեղ փսայվար չմնացիր, ապա էլ դա՞ր կէրթաս, թո մնիր ըստեղ, ճամխիր մերդ պիրի մեյտեղ ապրինքյ. Ծահտոտիեն ո՞րտեղ պիտի կնդնես, քսան օր կնանց, մնաց քսան օր:

Տղեն կասի. - Ես չեմ կիտե. քյանի դյունեին ծեր կա, պիտի կան գյանմ, չյում կնտանեմ:

Ծին կասի. - Իրեսդ սիվդակ, աչկերդ խփի, զանգյուն զարկ:

Աչքեր կխփի. զանգյուն կզանի. մեկ էլ կտիսնա մուռ աշխար մի: Կէրթա մեչ էդա քյաղքյին, ծին կտանի, դյուզ թակավորու դռան ռանճ կկայնի:

Խանբար կուտան թակավորուն, թե ըսկնա թռսուն տղեմ իկե քյե կոնախ:

Թակավոր ամր կանի, ծին կքյանշի ներս, տղեն կէրթա թակավորու կուշտ կնստի:

Թակավորու ախչիկ, որ կտիսնա տղի ջահելութեն. խորոտկութեն. կանլամքյաշ ընքյվեր, թուխ-թուխ աչքեր, քյառսուն սրտով կսիրվի վերեն: Խանբար կճամխի թակավորուն. կասի. - Զի կուտաս էդա տղին, թե՝ չէ, զեռիր կխմեմ. կմեռնեմ:

Թակավոր որ կլսի ուր մեյ խաստիկ ախչկան ասած, կմնա շիվար. կկանչի վանզիր, սանդրազամ. օնիքյիլար. ժողով կանեն. տղին շատ թե քիչ կհամոզեն. ախչիկ կփսակեն վերեն: Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն:

Տղեն քյանիմ օրից սորա, մեչ տեղաց ա՞խ կքյաշի:

Ախչիկ որ կլսի, շատ կզարմանա, կասի. - Ա՛յ տղա. քյե զեզնից էլ խորոտ կա, ի՞նչ ա՞խ էր քյանշիցիր:

Տղեն կասի. - Հէ՛, դյու իմ գյլխուցն էլ ասվել ես, ամա ես մեկ վանզիրիմ տղա եմ, մեր թակավոր խաս բաղչեմ ունի. որ բիրդան չորցավ, ես իկիր եմ. որ Շահտոտիեն տանեմ, խաս բաղչի մեչ կարդա. էլըմ կանաչի: Քյառասուն օր եմ առե. եռասունմեկ օր ընցավ. մնաց ինն օր. որ չտանեմ. իմ էլած-չէլած թակավոր կզավթի. մերս կսպանի. ճար չկա. պիտի էրթամ:

Ախչիկ լալելեն կէրթա սո թակավոր. կպատմի ուր լսածներ:

Թակավոր կկանչի տղին. ինչ կանդար որ կհամոզի՝ էլ ճար չէլնե, տղեն կէլնի, քյառասուն օր օր կառնի. ուր ծին կքյաշի դյուս, թաթարի թիմարմ կուտա, թասմ պաղ ճյուր մեկ վեր պոչին, մեչ մեր բժիյթերաց կլցի. այար կդնի, կխեզնի ուր ծին. քյաղքյից դյուս կուգյա:

Ծին կասի. - Ա՛յ տղա, էլավ իրեքյ տեղ ի կփսայվես. չես դադրե. ապա դյու դո՞ր պիտի էրթանս, մնաց ինն օր, էլ դո՞ր կանաս էրթա. Շահտոտիեն ո՞րտեղեն կանաս կնդնե:

Տղեն կասի. - Զեմ կիտե. ին օր կֆռամ. ին օրից սորա, աստված օղորմած ի:

Ծին կասի. - Որ ըդսկնա եի. իրեսս սիվդակ. աչքերդ խփի. զանգյուն զար. տիսնանքյ ի՞նչխ կէլնի:

Տղեն աչքեր կխփի. ջուխտմ զանգյու կզանի. ծին կթնի՛. իրեքյ օր. իրեքյ կիշեր ճանմբանխ կէրթա. մեկ էլ չեղլու չիման դանշտիմ մեչ ծին կկայնի. կասի. - Է՛յ տղա, էլ ես ըսդեհից էնտեխ չեմ կանաս գյա: Էլ հանդ չունեմ. իմ տիրվանքյ գյեռ հա. դանշտի մեչտեղ նստուկ են. ես ինոնցից եմ ինատ արե. իկե ինգյե խորդ ծեռ:

Տղեն կիրիշկա, որ դանշտի օրթեն կանաչ-կարմիր պոցմ կպանցրանա. ծին կասի. - Կէրթանս ինա պոցի մոտ, չվախենաս, թե Շահտոտիեն սալախ էն տեղեն առնեն:

Ծին կմնա էնտեղ. տղեն կէրթա: Զյում կխասնի էդա պոցի մոտ. կտիսնա. որ ի՞նչ՝ մանգյուր պոց չի. մեկ պստիկ էօդեմ. ախչիկմ մեչ նստուկ ի, չուտես-չխմես, թամաշա անես. ճրաքյի պես լիս կուտա, արեգյական պես կվառվի: Էդա պոց որ կէրնա, էն ախչկանն շտասվելն ի:

Տղեն գյանխտիկ կիրիշկա, որ ախչիկ կտիսնա, կվանխենա, կքյանշվի ետ, կասի. - Ես ինչխ անեմ մկա. որ իմցանվ, վախենամ զի սպանի:

Ցավաշ-յավաշ ետ կքյանշվի. որ փախնի. մեկ էլ բիրդանն ախչիկ կբռնա. - Է՛յ Ահմադ. դո՞ր կփախնես. արեյ, մե՛ վախենա, խենքյ ի՞նչի ես իկե ըստեղրանքյ:

Ահմադ որ կլսի, կշիվարի, կասի. - Զա՛նմ, իմ անու՞ն որտեղից կիտեր, էլ ի՞նչխ անեմ. բարեմ էրթանմ, խենքյ ի՞նչ կէլնի իմ հանլ:

Փեշեր կժողվի. ծեռ սուտին, վիզ կքյերթի, չեռքյե-չեռքյ կէրթա անանճ:

Փանրին որ կտիսնա Ահմանդին. շոտմ կէլնի վեր, ծեռ կպոնի, կտանի ուր կուշտ կնստցուցի, կասի. - Ահմանդ, մի՛ վանխենա, ես քյոն եմ. էն քյո մանրիֆանթն չէր: Էն ուլնիկներ որ թանփավ վեր քյո գյլխուն, տես՝ իմ աչ ծեռաց բլանգուկն ի, ծանխ ծեռաց ըսկո եի. էն քյո մանրիֆա՞թն էր, որ դնն սպասնիցիր, թակավորու ախչիկն առիր:

Յախոտ էն քյո մարիֆա՞թն էր գյողերաց էլար ինգյեր, գյողցված մալեր կնդար, գյողեր տվիր սպանել: Թակավորու ախչիկն առիր. ապա էն քյո մարիֆա՞թն էր. որ խետ կնանցիր թակավորու տուն. ախչիկ շոտմ սիրվավ վերեդ. քյե առեց. իրեքյ կնիյ որ առիր ես. ապա ինչի՞ էլ էկար մո զիկ:

Ահմադ կշիվարի, էլ չկիտի ի՛նչ ասի: Կասի. - Ես իկիր եմ. որ Ծահոտոտիեն տանեմ, թակավորու խաս բանդչի մեչ կարդա. էլմ կանաչի, քյառսուն օր օր եմ ասե. որ չխասնեմ. իմ էլած-չէլած յաղմա կանեն, մերս կսպանեն. եռսունևութ օր թմմեր ի. մնացե էրկու օր, ճարս կտրե. իմ ճարն դյու ես:

Փաղրին կտիսնա Ահմադի աղաչանքյ ինել, կխանի Ծահոտոտիեն ոսկի կուրթու մեչ, կասի. - Դե՛, դիր ջեռբդ. ա՛ռ իսա փասսն էլ, դի՛ր ծոցդ. որ կէրթաս ծեր քյասդաքյ, չէլնի էրթան ծեր տուն. դյուզ կնա մո թակավոր. Ծահոտոտիեն թա՛լ թո խաս բանչեն կանդան. թո՛ խաս բանչեն կանաչի. խորոխպերդ էնդեհեն քյե կասի. - Ահմա՛դ. կնացիր իսա կանդանր դյունեն փոացիր, Ծահոտոտիեն պիրիր, ապա զիկ ի՞նչ ես պիրե: Դյուն էլ խան էսա փանս, տուր խորոխպորդ: Մոյեաթ կաց. մարթու ծեռ չիտաս, ինչխ որ ասի, ըսկուն անես:

Մեկ էլ բիրդանն փաղրին ծափ կզանի. կպոռա. - Հյուրի փաղրիներ:

Մեկ էյ բիրդանն քյառսուն փաղրի մեյտեղ կուզյանն հանզր, ալասթա դեմ կկայնեն:

Ճոչ փաղրին կասի. - Ահմադի խալվներ խանեքյ, փարյու խալավ խագյուցեքյ, որ քյեֆ անենքյ:

Ահմադի խալվներ կփոխեն, կանեն ուրենց պես փաղրի, չալկիքյ կզանեն. չյում իրիկուն քյեֆ կանեն:

Ահմադ ուրախութնե պերայնսվեր կինի, բայլմիշ կէլնի:

Ճոչ փաղրին չորս փաղրիին ամր կանի, կասի. - Ահմադի խալավներ փոխեքյ. վերուցեքյ խետ ուր ծիուն, տարեքյ դրեքյ թակավորու դռան առանձ:

Ինքն կէլնի կառնի Ահմադի էն իրեքյ կիյթեր, կիշրով կուզյա կէրթա Ահմադենց վիրին էօդեն, կնստի:

Փաղրիքյ որ Ահմադին կվերուցեն, ուր խին խալվներով ու ծիուն կպիրեն. կդնեն թակավորու դռան առանձ. ուրենքյ կկուրիսեն:

Մեկ էլ բիրդանն Ահմադ կսքխի. կտիսնա. որ ինքն ուրենց քյաղաքյ. ուրենց թակավորու դռան առանձ. ծին խե կշտին պառկուկ ի: Կշիվարի կասի. - Ջա՛նըմ. էսա էրա՞զ ի. ես կնացեր ի. որ Ծահոտոտիեն պիրի. իրեքյ թակավորու ախչիկն եմ առե. չեռլ-չիման դանշտի մեչ փաղրիքյ թիկանց եմ տիսե. փաղրին զի Ծահոտոտիեն տվե. մեյ խատ էլ ֆանս ի տվե. էսա ի՞նչ պանն ի: Էսա էրազ ի. էրազ չի: Աղվորթ ի, աղվորթ չի, էսա ի՞նչ պանն ի:

Աչքեր ճմոթելեն կէլնի կկայնի. կասի. - Տո՛ վալա. իսա մեր քյաղքյնի ի. տո՛ վալա ես պիտի մեյ խատ էրթամ մերս տիսնամ, նոր էրթամ մո յուսկավոր:

Կէլնի ծին կխեծնի, կքշի վեր ուրենց դռան: Դյուտ կթփի:

Դյու մի ասե՝ էն օրվե, ինչ Ահմադ կնանցե, վանզիր զմեն օր դյուտն արե թախթախ, զմեն կանխ կէրթա մոր յախեն կպոնի. կասի. - Ահմադն կնաց. էլ նո՞ր կուզյա. դյուս էլի. քյաֆթան, ծեր տուն յաղմա պիտի անենքյ, քյե պիտի տանենքյ մորթենքյ:

Մեր զմեն կանխ անանչանքյ կինի. պաղատանքյ կանի, կասի. - Աստծու սիրուն. սաբր արեքյ չյում քյառսուն օր թմմի. նոր ինչխ կուզեքյ, ըսկուն արեքյ:

Ահմադ որ կէրթա դյուտ կթփի, մերն ներսանց կասի. - Ջա՛նմ. ի՞նչ կուզես, մեկ

օր մնաց, սաբր արա, որ տղես չէկավ. նոր դյու քյո աստված, ինչ կուզես ըսկուն արա:

Ահմադ որ կլսի մոր աղաչանքյ. կխասկնա ինչ բաս ի. կբոռա. - Մ'արե'. մի' վնխենա. դյուռ պաց. ես եմ:

Մեր որ տղի ծեն կլսի, ուրախութենե կվազի. ոտ կակոի քյարին. կինի գյլոխ կկոտրի: Վարհապ, դյուտ կպանաս: Տղեն կգյրկի վեր ուր սրտին, կուզի, կպաքյի, շատ կուրախանա:

Ահմադ կլսի, որ վիրի էօդից չալկիեի ծեն կուգյա. կասի. - Մարե', էն ի՞նչ ծեն ի մեր էօդից կուգյա:

Մերն էլ, որ կլսի կշիվարի, կասի. - Զեմ կիտե, բալա'մ. չէլնի՞ չարքյերն են, թե չէ՝ մեր տուն մարթ չկա:

Ահմադ կէրթա վեր, կտիսնա, որ ի՞նչ. փանրին է մեկէլ իրեքյ թակավորու ախչկներ հյուրի փանրիքյթեկաց խետ կզանեն, կխաղան:

Ահմադ կասի. - Էյ վախ, ես ի՞նչխ անեմ, չէ որ փանրին զիկ ասաց՝ չէրթաս տուն, ես ինչի՞ ինոր խանբանր ակսանշ չարի: Կանի, որ ետ դանոնա, փանրին բիրդանն կկանչի. - Ահմադ:

Ահմադ կշշկոի. - Ջա'նմ, - կասի, - էն ի՞նչխ զի տեսավ, մկա ինչ ջուաբ տամ:

Փանրին կասի. - Ահմադ, արե, մի' վնխենա, ինչ աղեկ էկար. ես պանն ի մոցե, որ քյե չասի. կէրթանս թակավորու մոտ, Շահտոտիեն կուտաս. ֆանսն էլ կուտաս խորոխպորդ. թակավոր քյե կասի՝ ուզի, ուզածդ տեսնամ ի՞նչ ի: Դյու պանն մ'ուզե, էնտեղ իրեք խատ քյոտաի կա, ճոչին չէ, օրթանջին չէ, պստիկ քյուտսու վերեն կնստես, թակավոր ուր պստիկ ախչիկ կուտա քյե, մառախ մանե: Զորս թակավորու ախչկներ քյո ճոչ խանմներ, եվ էլ զաթի քյե սիրիր եմ, էնոնց պստիյն կէլնեմ, մեյտեղ կապրենքյ, զիգնից մի վախենա:

Ահմադ ետ կդանոնա, դյուզ կէրթա թակավորու մոտ, կկայնի թակավորու անանց:

Թակավոր որ կտիսնա Ահմադին, շատ կուրախնա, կասի. - Բալա'մ, Շահտոտիեն պիրի՞ր:

Ահմադ կխանի ուր ջեռբեն Շահտոտիեն կուտա թակավորուն, թակավոր կառնի կութին. կպանանմ Շահտոտիեն մեչեն կթոնի. կէրթա խաս բանչեն. կսկսի կանրդալ, խաս բանչեն էնգյանխ ինե. առաճն ի՞նչխ էր, էլմէլ ըսկուն կկանաչի, եմիշն ուր տեղ. ծաղիկն ուր տեղ:

Թակավորու ուրախութենին էլ չափ չկա:

Ահմադի խորոխպեր էնդեհեն որ կտիսնա Ահմադին մանրիֆանթ կասի.

- Բալա'մ. դյու կնացիր իսա կանդանր կան էկար, Շահտոտիեն պիրիր, ապա չասի՞ր՝ պանմ էլ տանեմ վանզիր խորոխպորս:

Ահմադ կասի. - Ցա խորոխպե'ր. ի՞նչխ կէլնի, որ ես քյե մոռնամ, առա' տես քյե ինչ եմ պիրե:

Ծոցեն ֆաս կխանի. որ տա խորոխպոր, թակավորն էնդեհեն, որ կտիսնա, կասի. - Չէլնի. էդ էլ պիտի տաս զիկ:

Ահմադ կասի. - Շահտոտիեն քյե, ֆանս էլ խորոխպորս, - ֆանս կուտա ուր խորոխպոր:

Խորոխպեր ֆանս խետ առնելուն կկոոծի գյլոխ, կրայ կինի վանզիր, կվանովի, կէլնի մոխիր, կլցվի գյետին:

Սադրազամ Էնդեռեն կասի. - Ախպե՛ր. ես պանն չեմ ուզե:

Թակավոր կասի. - Աստված ուր հախ-դադաստան կանի, թո ըսկնաւ չաներ, ըսկնա չէլներ:

- Ահմադ, բալա՛մ. մառախ մանե, ուզի՛ ուզածդ:

Թակավոր կպիրի ուր պստիկ ախչիկ կուտա Ահմադին:

Ցոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն:

Ահմադին կանի ուր վազիր: Ահմադ կառնի ուր կնիկ կէրթա ուր տուն, խետ էմեկէլ թակավորների ախչկներաց, խետ փարիին մեյտեդ կապրին:

Կխասնեն ուրենց մուրազին, դյուքյ էլ խասնեքյ ծեր մուրազին:

Էրկնուց իրեքյ խատ խնձոր ինզյնավ, մեկ՝ ասողին, մեկ՝ գյրողին, մեկ՝ կարդնցողին: